

Վրեժ Հարությունյան

ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՅՈՒՄ

Բանալի բառեր – Շուշի, Ղարաբաղի Հայոց թեմական դպրոց, Բաղդասար Հասան-Ջալալյանց, Բաղդասար Արզումանյանց, Միքայել Արամյանց, Գրիգոր Բեգլարյանց:

Ցանկացած ժողովրդի մշակութային առաջընթացի ու քաղաքակրթական վերելքի գրավականը եղել է կրթությունը: Գիտությունն ու կրթությունը միշտ առաջնային տեղ են ունեցել նաև հայոց պատմության մեջ:

Հայ իրականությունում ուսումնական հաստատությունները կրել են դպրոց, դպրանոց, դպրատուն, լսարան, վարժարան, վարժատուն, ուսումնարան, կրթարան, վարդապետարան, ռաբունարան, համալսարան և նման այլ անուններ:

Առաջին հայկական դպրոցների հիմնումը կապվում է Մեսրոպ Մաշտոցի անվան հետ: Մաշտոցը դպրոց է հիմնել նաև Արցախի տարածքում, Ամարասում: Այդ փաստը վկայում է, որ Մաշտոցի ապրած ժամանակներից առ այսօր արցախցիների կյանքում գիտության և կրթության օջախները կարևորագույն նշանակություն են ունեցել:

Արցախի կրթամշակութային կյանքում կարևոր դերակատարում է ունեցել Շուշին՝ որպես ուսումնակրթական կենտրոն: 1822 թ. Շուշիի խանության վերացումից հետո կրթամշակութային կյանքը Շուշիում աննախադեպ զարթոնք է ապրում: 1820-1920 թթ. ընթացքում այստեղ գործող թվով տասը կրթական օջախների ճանաչումն ու համբավը դուրս էր եկել երկրամասի սահմաններից: Դրանցից հիշատակման են արժանի Ղարաբաղի Հայոց թեմական դպրոցը (հիմնվել է 1838 թ.), Ղարաբաղի Տիրամայր սուրբ Մարիամ օրիորդաց ուսումնարանը (1864 թ.), Քաղաքային ուսումնարանը (1875 թ.), Ռեալական ուսումնարանը (1881 թ.), Մարիամ Ղուկասյան օրիորդաց գիմնազիան (1912 թ.) և այլն:

Նշված ժամանակաշրջանում մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործում մեծ է բարերարների դերը, որոնց հատկացրած նյութական միջոցներով էլ հիմնվել են դպրոցներ և ուսումնարաններ:

Դպրոցների դերը Շուշիի հասարակական կյանքում անժխտելի է և այդ տեսակետից առաջնության պատիվը պատկանում է Շուշիի Հայոց թեմական հոգևոր

դպրոցին, որը բացվել է 1838 թ. հունիսի 22-ին Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալյանցի ջանքերով ու միջոցներով՝ իր առաջնորդության երկրորդ տարում: Սկզբնական շրջանում դպրոցը նյութապես ապահովված չէր, չունեի հիմնական դրամագլուխ, որոշակի պահպանության աղբյուրներ: Բաղդասար մետրոպոլիտը դպրոցը բացեց՝ հույսը դնելով հայերի աջակցության և օժանդակության վրա¹: Կոնստանդնուպոլիսում թվի հունիսի 29-ին դիմում է Ս. Էջմիածնի սինոդին, որպեսզի հաստատի հոգևոր թեմական դպրոցի հաստիքները: Սինոդը հոկտեմբերի 8-ի գրությամբ հաստատում է այդ հաստիքները: Բաղդասար մետրոպոլիտը նոյեմբերի 9-ին օրհնության թուղթ է ուղարկում թեմի 6 շրջանների՝ Դիզակի, Վարանդայի, Խաչենի, Ջրաբերդի, Իգիրմիդորդի² և Բարդաբասանի³ հայ ժողովրդին, որ կամավոր նվիրատվությամբ օգնեն հոգևոր ատյանին և հոգևոր ճեմարանին, ուր սովորում են Ղարաբաղի թեմի հոգևորականների երեխաները, որտեղ պետք է ազգերի պատմության և լեզվական գիտելիքներ ձեռք բերեն, որ ավարտելուց հետո ժողովրդի ճշմարիտ, իմաստուն հովիվներ դառնան: Թե՛ հոգևոր ատյանը և թե՛ դպրանոցը զուրկ էին եկամուտներից, ուստի մետրոպոլիտը հաճախակի օգնության դիմումներ էր հղում մի կողմից՝ ժողովրդին, մյուս կողմից՝ կաթողիկոսին ու սինոդին: Սինոդին ուղղված մի գրության մեջ նա հայտնում էր, որ ժողովուրդը սիրով նվերներ չի տալիս՝ առարկելով, որ դպրոցներում սովորում են միայն հոգևորականների զավակները, իսկ աշխարհականներինը՝ ոչ: 1838 թ. դեկտեմբերի 17-ին սինոդը թույլ է տալիս, տեղ լինելու դեպքում, դպրանոց ընդունել նաև աշխարհականների երեխաներին: Դպրոցի առաջին ուսուցիչներն են եղել Գրիգոր ավագ սարկավագ Տեր-Ավագյանը, թուրքերեն և պարսկերեն լեզուների ուսուցիչ մուլլա Ալլահվերդին, որին հաջորդ տարին փոխարինել է հայազգի միրզա Ֆարուխ Ամիրխանյանը: 1841 թ. դպրոցի տնօրենն էր Գաբրիել Մամիկոնյանը: Սեփական շենք չունենալու պատճառով դպրոցը տեղավորված էր վարձված շենքում՝ տարեկան 100 ռուբլի վարձով: Նյութական սղության պատճառով 1843 թվականին դպրոցը ժամանակավորապես փակվում է: 1845 թվականին մետրոպոլիտը կրկին ժողովրդի օգնությանն է դիմում և դպրոցը վերաբացվում է: Շուշիի քաղաքացիներից մեկը վեց ամիս ժամանակով իր տունը ձրի տրամադրում է դպրոցին, իսկ քաղաքի պետական դպրոցի տեսուչ

¹Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 227, ց. 1, գ. 174, թ. 115:

²Խամսայի մելիքություններից մեկը, այդպես է կոչվել նաև Գյուլիստանի մելիքությունը:

³Գավառակ Ղարաբաղում, տարածվում է Ջրաբերդ գավառից արևելք:

Խիտրովը հանձն է առնում ձրի վարել դպրոցի տեսչության պաշտոնը և ավանդել ռուսաց լեզու, պատմություն և աշխարհագրություն՝ նույնպես ձրի¹:

Սակայն 1852 թ. նոյեմբերին Ներսես Ե. Աշտարակեցի կաթողիկոսի կարգադրությամբ դպրոցը նորից փակվում է: Վերաբացվում է երեք տարի անց նույն կաթողիկոսի թույլտվությամբ: 1853 թվականին Բաղդասար մետրոպոլիտն իր հիմնադրած թեմական դպրոցի համար շենք կառուցելու նպատակով առաջնորդարանի դիմաց հողատարածք է վերցնում, սակայն մահանալով՝ այդ նախաձեռնությունը մնում է անկատար, որը ավարտին է հասցնում Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալայանը: 1872 թ. հունիսի 22-ին տեղի է ունենում նոր շենքի բացման արարողությունը:

1859 թ. դեկտեմբերի 4-ի Մաթևոս Ա. կաթողիկոսի կոնդակով հաստատվում է Շուշիի Հայոց թեմական հոգևոր դպրոցի կանոնադրությունը²: 1860 թ. դպրոցը հանձնվում է Շուշիի հասարակության կողմից ընտրված հոգաբարձությանը, որին հաջողվում է զգալի չափով բարելավել դպրոցի նյութական դրությունը:

Ս. Էջմիածնի հայոց լուսավորչական սինոդի 1879 թ. տվյալներով դպրոցն ուներ 8 դասարան, 15 ուսուցիչ, 334 աշակերտ, դպրոցի պահպանման աղբյուր էին եկեղեցական գումարները և ժողովրդի կամավոր նվիրատվությունները³:

Թեմականի տեսուչները 19-րդ դարի երկրորդ կեսին մեծ մասամբ Եվրոպայի և Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթություն ստացած գործիչներ էին (Պետրոս Շանշյան, Խորեն Ստեփանե), որոնք Շուշի էին բերում նոր, առաջադիմական գաղափարներ և ծառայեցնում հասարակական կյանքի առաջընթացին: Թեմական դպրոցում դասավանդել են ապագա նշանավոր հայագետներ Հ. Աճառյանը, Մ. Աբեղյանը, Մ. Պլուզյանը, գրողներ Պ. Պռոշյանը, Ղ. Աղայանը, Վ. Փափազյանը: Դպրոցի շրջանավարտներն ակնառու դեր խաղացին հայոց ազգային մշակույթի, գիտության, գրականության ու արվեստի բնագավառներում (Մուրացան, Լեո, Հ. Առաքելյան, Կ. Մելիք-Շահնազարյան և այլք): Դպրոցը մեծ փոփոխությունների է ենթարկվում, երբ Մաթևոս կաթողիկոսը, շուշեցիների խնդրանքով, 1863 թ. դպրոցի տեսուչ է նշանակում Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում տարիներ առաջ հռչակված Պետրոս Շանշյանին: Վերջինիս օգնականն էր Պերճ Պռոշյանը, որ դասավանդել է հայոց լեզու, հայ գրականություն և հայոց պատմություն: Շանշյանի ու Պռոշյանի և մյուս ուսուցիչների ջանքերի շնորհիվ թեմական դպրոցն

¹ Տե՛ս «Տարագ», Թիֆլիս, 1913, թիվ 7-8: «Տեղեկագիր Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրանոցի 75-ամեայ գոյութեան»:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 879, թթ. 3-6:

³ Նույն տեղում, ֆ. 56, ց. 1, գ. 7280, թթ. 2-3:

սկսում է ծաղկել, ենթարկվում է արմատական փոփոխությունների: 1912 թ. նշվում է դպրոցի հիմնադրման 75-ամյակը¹: Դպրոցի հոբբեյանի նախապատրաստական աշխատանքները սկսվում են դպրոցի նյութական ապահովության համար դրամահավաքությամբ²: 1912 թ. փետրվարի 15-ին թեմական դպրոցի տոնակատարությունների համար ստեղծված հանձնաժողովի նախագահ, Արցախի թեմի ժամանակավոր կառավարիչ Ջավեն վարդապետը խնդրանքով դիմում է Գևորգ Ե. կաթողիկոսին՝ դպրոցի հոբբեյանը նշելու և ընդհանրապես կրթական գործը բարելավելու համար օրհնության և հորդորական թուղթ տալ դարաբաղցիների անունով, նպաստել բարենպաստակ ու ազգօգուտ գործին: Այդ խնդրանք-դիմումն ուղարկվել է թեմական դպրոցի հոգաբարձու Գ. Քալանթարյանի, ճարտարապետ ու հոգաբարձու Մկրտիչ Ղոնդաղսազյանցի և դարաբաղցի ունևորներ Դավիթ Ավան-Յուզբաշյանի, Գաբրիել Կաֆյանցի և այլ ականավոր անձանց մասնակցությամբ Թիֆլիսում կայացած խորհրդակցությունից հետո³, որը երկու օր անց արժանանում է Վեհափառի հավանությանը⁴: Ջավեն վարդապետի հաշվումներով, եթե շուշեցիները 250-300 հազար ռուբլի նվիրաբերեն դպրոցին, ապա այդ գումարի 5 %-ը կապահովի դպրոցն ընդմիջտ և դրամագլուխն էլ ապահով ու անձեռնմխելի կմնա որևէ բանկային հաստատությունում: Ըստ նրա՝ «Դա մեծ գումար էլ չէ շուշեցիների համար, որոնք առանց այն էլ տարեկան 7-8 հազար ռուբլի տալիս են, որից ոչ մի յետք չէ մնում»⁵:

Ինչպես վկայում էր թեմի հայ ազգաբնակչության, հոգևոր-վարչական, դպրոցական և կալվածական դրության մասին Ջավեն վարդապետի 1911/12 թթ. համառոտ տեղեկագիրը, թեմական դպրոցը սեփական շենք չունենալով՝ տեղավորված էր Մարիամյան օրհորդաց դպրոցի համար կառուցված շենքում, իսկ Մարիամյանի աշակերտուհիները՝ թեմական դպրոցի հին շենքում, և երկու շենքերն էլ դպրոցի համար հարմար չէին: Այս վիճակը կարող էր ոչ միայն դպրոցի զարգացումը խոչընդոտել, այլև փակման վտանգի առաջ կանգնեցնել⁶: Եվ քանի որ տոնահանդեսը պետք է կատարվեր առաջնորդարանում, որինկից էր դպրանոցը, Կովկասի բոլոր ազգային-հասարակական հաստատություններն իրենց պատգամավորություններով պետք է

¹Տե՛ս Քոչարյան Ա., Շուշիի հայոց հոգևոր թեմական դպրոցի հիմնադրման 75-ամյակի տոնակատարությունները՝ ըստ արխիվային վավերագրերի, <<Բանբեր Հայաստանի արխիվների>>, 2012, թիվ 1-2, էջ 213:

²ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 171, թթ. 46-50:

³Նույն տեղում, ֆ. 57, ց. 2, գ. 963, թթ. 3 և շրջ.:

⁴Նույն տեղում, թթ. 1 և շրջ.:

⁵Նույն տեղում, ֆ. 227, ց. 1, գ. 171, թթ. 49-50:

⁶Նույն տեղում, ֆ. 57, ց. 2, գ. 1908, թթ. 3-19:

ներկայանային: Այդ պատճառով Ջավեն վարդապետը դիմում է Ս. Էջմիածնի Մինողին՝ առաջնորդարանի շենքում և բակում նորոգություններ անելու միջոցներ խնդրելով¹:

Թեմական դպրոցի հիմնադրման հոբելյանի առիթով կատարվում են հանգանակություններ: Ջավեն և Բաբկեն (Ս. Մինողի անդամ, նշանակվել էր Ս. Էջմիածնից հոբելյանական աշխատանքներին աջակցելու համար) վարդապետները հանգանակում են 600.000 ռուբլուց ավելի գումար, որ ներառում էր մոսկվաբնակ Ղարաբաղի Բաղդասար Արզումանյանի նվիրաբերած 200.000 ռուբլին, Հռիփսիմե Խանդամիրյան-Ղուկասյանի, դպրոցի սան Միքայել Արամյանցի, Մովսես Թավադյանի, Գրիգոր Բեգլարյանցի որդիների նվիրաբերությունները և այլն²: Միքայել Արամյանցը դպրոցին էր նվիրել 45.000 ռուբլի արժողությամբ իրտունը, որը գտնվում էր Շուշիում, իր վրա էր վերցրել վերակառուցման և ճանապարհի վերանորոգման ծախսերը³, որի համար հուլիսի 18-ի Հայրապետական կոնդակով ստացել էր Վեհափառի օրհնությունը⁴:

1913 թ. հուլիսի 18-ին Չեղոզ Ե. կաթողիկոսը Հայրապետական կոնդակով ընդունում և հաստատում է Բաղդասար Արզումանյանցի՝ դպրոցի հոբելյանի համար կատարած նվիրաբերության կտակավանդ գրությունը: Նկատի ունենալով կտակի կարևորությունը՝ նպատակահարմար է այն մեջբերել.

«Ա.ԵսՇուշի քաղաքացի Մոսկուաբնակ Բաղդասար Արզումանեանցս, ի վաղուց աչքի առնելով Ղարաբաղի Հայոց Հոգևոր Թեմական Դպրանոցի նիւթական վիճակը, որը վտանգ է սպառնում նրաապագայ լուսատու յարատևութեան, և կամենալով, որ այդ պատկառելի հիմնարկութեան 75-ամեակը, որ լրանում է ներկայումս, գոնէ կարողանար նրան բարձրացնել նիւթապէս այնքան, որ նա կարենար մշտական և աւելի լոյս տարածել իմ հայրենակից Ղարաբաղի խաւար ժողովրդի մէջ, ես Աստուծոյ օրհնութեամբ և յօժար կամքովս իմ միջոցներից նուիրաբերում եմ իմ ծննդավայր Ղարաբաղի Շուշի քաղաքի Հայոց Թեմական Դպրանոցին երկու հարիւր հազար (200.000) ռուբլի նրա ապահովութեան համար, որպիսի գումարը պէտք է ընդմիջտ մնայ անձեռնմխելի, իսկ տոկոսիքը իւրաքանչիւր տարի մտնում է նոյն դպրանոցի նախահաշուի մուտքի մէջ:

Բ. Վերոյիշեալ նուիրաբերածս երկու հարիւր հազար ռուբլին դպրանոցի 75-ամեայ յոբելեանը կատարելու օրից, այն է՝ ներկայ 1913-14 թ. ուսումնական տարուայ սկզբից,

¹ Նոյն տեղում, ֆ. 56, ց. 18, գ. 955, թ. 1:

² Տե՛ս «Տարագ», Թիֆլիս, 1913, թիվ 7-8, էջ 104: «Ղարաբաղի ազգային-հոգևոր դպրանոցի 75-ամեայ յոբելեանը»:

³ Տե՛ս Վահե Անթանեսյան, Միքայել Արամյանց, Երևան, 2011, էջ 46:

⁴ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 309, թթ. 86 շրջ.-87:

ես տալիս եմ ի սեպհականություն Ղարաբաղի Հայոց Հոգևոր Դպրանոցին հետևեալ ձևով:

Մինչև իմ մահը՝ ես Բաղդասար Արզումանյանցս վճարելու եմ իւրաքանչիւր տարի դպրանոցի Հոգաբարձութեանը վերոյիշեալ մայր գումարի տոկոսիքը հինգ տոկոսով՝ այն է տասը հազար (10.000)ռուբլի, իսկ իբրև ապահովութիւն նուիրաբերածս մայր գումարի, տալիս եմ դպրանոցին Մոսկուա քաղաքում գտնուող, աւելի խոշոր արժողութեամբ, քան նուիրաբերածս գումարը, իմ մէկ տուն-կալուածքս, որ գտնուում է Покровка, Чистые пруды կոչուած կենտրոնական քաղաքամասում 1046 քառ. սաժ.[եմ]¹ տարածութեամբ:

1) Իմ մահուանից յետոյ իմ օրինական ժառանգները պարտաւոր են, ոչ ուշ քան երկու տարի, մայր գումար երկու հարիւր հազար ռուբլին իւր տոկոսներով կանխիկ դրամով, կամ նոյնիսկ գումարը արժեցող պետական արժէթղթերով մտցնել որևէ բանկային հաստատութիւն, համաձայնութեամբ Ամենայն Հայոց Հայրապետի, ազատելով վերոյիշեալ իմ անշարժ կալուածքը, իսկ եթէ վերոյիշեալ գումարն իմ օրինական ժառանգները երկու տարուայ ընթացքում իմ մահիցս յետոյ չվճարեն, այդ դէպքում դպրանոցին իբրև ապահովութիւն թողած տուն-կալուածքս մնում է ընդմիշտ ի սեպհականություն Ղարաբաղի Հայոց Հոգևոր Դպրանոցի, որի արդիւնքով պահպանվում է դպրանոցը:

2) Նաև ինձ եմ վերապահում իրաւունք իմ կենդանութեան ժամանակ ևս նուիրաբերածս երկու հարիւր հազար ռուբլին, իմ օրինական ժառանգներին պարտաւորեցրածս ձևով, մտցնել բանկային որևէ հաստատութիւն և իբրև ապահովութիւն թողած 1046 քառ. սաժ. տուն-կալուածքս ազատ համարել:

Գ. Մինչև իմ մահս՝ ես Բաղդասար Արզումանյանցս, իսկ այնուհետև ազգականներիցս մէկը պէտք է լինի Թեմական Դպրանոցի հոգաբարձական կազմի մէջ իբրև պատուաւոր հոգաբարձու: Այդ հոգաբարձուն պէտք է լինի Հայ-լուսաւորչական և նրա ընտրութեան իրաւունքը թողնում եմ իմ ազգականներին: Այդ պատուաւոր հոգաբարձուին իւրաքանչիւր տարի պէտք է ուղարկուին դպրանոցի նախահաշիւը և տարեկան իսկական հաշիւները:

Դ. Դպրանոցի հոգաբարձութիւնը պարտաւոր է իմ ծննդավայր Ջարդանաշէն (Վարանդայի Վերին Թաղավարդ) գիւղի չքաւոր մանուկներից վիճակ ձգելով՝ իւրաքանչիւր տարի ընդունել ձրիավարժ աշակերտներ, երկու հոգի, իբրև որդեգիր իմ անուան:

¹ Սաժեն՝ երկարության չափման հին ռուսական միավոր է, 1 սաժենը հավասար է 2,134 մետրի:

Ե. Եթէ երբ և իցէ և որևէ պատճառով յիշեալ դպրանոցը փակուելու լինի, նուիրածս անձեռնմխելի երկու հարիւր հազար ռուբլին կամ եթէ այդ գումարի փոխարէն մնացել է 1046 քառ. սաժ. կալուածքս Մոսկուայում, անցնում է ի սեպհականութիւն Ս. Էջմիածնի և նոյնպէս միայն տոկոսները կամ արդիւնքը գործադրվում են Ղարաբաղի որևէ ազգային եկեղեցական Աստուածահաճոյ հաստատութեան վրայ վերստին իմ՝ Բաղդասար Արզումանեանցիս յիշատակի յաւերժացման համար, Ազգիս Վեհափառ Հայրապետի բարձրագոյն հաճութեամբ և հաստատութեամբ, որը վերին հսկողն է նուիրաբերածս նպատակի անշեղ գործադրութեան»¹:

Շուշիում մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործում մեծ է Արիստակես Խանդամիրյանցի ավանդը: Վերջինսիր մահվանից առաջ այդ նպատակի համար հատկացրել է 15.000 ռուբլի, որը տարիներ շարունակ մնալով բանկում, 1891 թվականին հասել է 48.000 ռուբլու: Նույն թվականին Խանդամիրյանցի ցանկությունն ի կատար է ածում նրա հարսը՝ Նինո Խանդամիրյանցը, ով այդ 48.000 ռուբլին բաշխում է հետևյալ կերպ. 20.000 ռուբլի հատկացնում է Շուշիի Հայոց թեմական դպրոցին, 20.000 ռուբլի՝ Շուշիում օրիորդական նոր ուսումնարան բացելու, 5.000 ռուբլի՝ այդ դպրոցի բակը դրսից ջուր բերելու գործին, իսկ մնացած 3.000 ռուբլին՝ չքավոր հայ աշակերտներին:

Թեմական դպրոցին իրենց ավանդն են ներդրել նաև Աբրահամ Նասիբյանը, Պ. Թադևոսյանը, Գրիգոր Բեգլարյանցի որդիները, Ա. Թյունիպեկյանը:

1907 թ. Մկրտիչ Ա.Խրիմյան կաթողիկոսն օրհնության կոնդակ է հղում բաքվաբնակ Աբրահամ Նասիբյանին՝ Շուշիի թեմական դպրոցին 1.000 ռուբլինվիրելու կապակցությամբ:

1910 թ. Բաքվում բնակվող շուշեցի Պ. Թադևոսյանը 30.000 ռուբլի է նվիրում իր ծննդավայրի ազգային ուսումնարանին և խոստանում ապագայում ուսման ծրագրերը ընդլայնելու նպատակով ևս 20.000 նվիրել:

1912 թ. «Կոչնակ»-ը հայտնում է, որ Շուշիում մահացած Գրիգոր Բեգլարյանցի որդիները Թեմական դպրոցին են հատկացրել 15.000 ռուբլի:

1915 թ. աշնան սկզբներին Թիֆլիսում վախճանված Ա. Թյունիպեկյանը կրթական նպատակների համար կտակում է 150.000 ռուբլի²:

Շուշիի թեմական դպրոցի գոյությունը դադարեցվում է 1920 թ. մարտի 23-ին, երբ թուրք-ադրբեջանական հրոսակները քաղաքը հրդեհի մատնեցին և հայ բնակչության

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 309, թթ. 80 շրջ-82 շրջ., 83 շրջ.-85 շրջ.:

² <http://www.shushi.org/education.php>:

մեծագույն մասը սրի քաշվեց: Ամբողջ մեկ դար տևած մշակութային աննախադեպ վերելքն ընդհատվեց այդ ողբերգական իրադարձություններով:

Вреж Арутюнян, Деятельность благотворителей в процессе становления Армянской епархиальной школы Карабаха,- В жизни армянского народа образование всегда занимало решительное место. В образовательно-культурной жизни Арцаха важную роль сыграл г.Шуши, как образовательный центр. В развитии и воспитании подрастающего поколения Шуши большая роль принадлежит спонсорам. Именно с помощью средств, которые они вложили, были основаны школы и училища. Доказательством тому является Армянская школа духовенства Карабаха, которая была основана во второй половине XIX и первой половине XXвеков в городе Шуши и содержалась на средства спонсоров.

Vrezh Harutyunyan, Sponsors' activity in the process of Artsakh church school establishment,- Education has always been important for the Armenians. Shushi played a leading role in the cultural and educational life of Artsakh. Sponsors have done a lot for the young generation especially in the sphere of education. Due to their financial support many schools and colleges were set up. The foundation of a spiritual school of Artsakh in 19-20 centuries is the bright example of this.

Վրեժ Հարությունյան- ԱրՊՀ-ի պատմության ամբիոնի ասպիրանտ: